



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՇՄԱԿՈՆ ՇԱՀԱՊՈՒԽԻ

ԶԵՐՄՈՒԽՆ ԱՆՑԱԼՈՒՄ ԵՎ ԱՅԺՄ



երմուկը շատ հին պատմություն ունի: Հայկական մատենագրության մեջ նա առաջին անգամ հիշված է 13-րդ դարի պատմագիր Ստեփանոս Օքքելանի: «Պատմութիւն հանանգին Սիսական» աշխատության մեջ՝ Վայոց Զորի հարկատու գյուղերի ցանկում (տես Թիֆլիսի 1910 թվականի հրատարակությունը, էջ 512): Զերմուկի մոտիկ ավերակներում և Զերմուկին հարեան կեշուտ գյուղի վիմագիր արձանագրություններից երևում է, որ Զերմուկը ժամանակին Սյունյաց թագավորների և Օքքելյան փշտանական տան ամառանոց-գուժավայրն է հանդիսացել:

Հ. Ալիշանն իր «Սիսական» մեջ հետևյալ տեղեկությունն է տալիս Զերմուկի մասին: «Իբրև փարսախաւ յեւս հիւսիս գեղջո կան ջերմուկը, յոր անուն գիտ հին նշանակի ի ցուցակին, և յայտ է թէ ի վաղուց անտի չուրբն երկաթահամք՝ վարեկի ի բաղանիս բժշկականս, որպէս ցուցանէ և հին քարաշէն աւազանն. ոչ սակաւ աղբիրք են անդ յորոց հինն (որպէս կոչեն) հզօրագոյն ՅՈ⁰ աչօմբիրի չերմությամբ. առնովաւ միւս ևս բղխեաց սակաւ ամօք յառաջ, որպէս ասեն, ի փրթածոյ և յանկմանէ սառնաձոյլ վիմի միոյ, որ փոստացուցեալ զկակուդ գետինոց բղխեցոյց զջերմուկոյն» (էջ 102):

Աքքելան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո, Զերմուկը վեր է ածվել Շարուր-Գալարագյազի զավասի պետական պաշտոնելիքան ամառանոցի, ուր մի քանի ամիս շարունակ նրանք եկել են իրենց ընտանիքներով, խիել են իրենց վրանները

ծաղկազարդ արոտատեղիներում, սառնորակ աղբյուրների մոտ և վայելել բնության բարիքը:


Զերմուկի շրերի բուժիչ հատկության մասին ժողովրդի մեջ դրական կարծիք գոյություն է ունեցել վաղուց. նրա շուրջը հրաշքներ են հյուսվել: Զերմուկի մոտիկ գյուղերում տեղացիները անուններով թվում են բազմաթիվ հիվանդների, որոնց Զերմուկը են տարել բուժելու ձիու կամ զրաստի վրա դրած, պառկած վիճակում. մի քանի անգամ հանգածըրում լողանալուց հետո նրանք բուժվել և իրենց ոտքով վերադարձել են իրենց բնակավայրերը:

1900 թվականին ես այցելել եմ Զերմուկը: Հիշում եմ, ձորում, Արփաշայ գետի մոտիկ, մի քանի փոսեր էին փորմած, որոնց մեջ հավաքվում էր հանքացին տաք ջուրը և հիվանդները մի քանի հոգով, երեմն ավելի շատ, մտնում էին այդ փոսերը և լողանում: Ըստ որում, բժշկական քննություն շկար, Զերմուկ էին բերում ամեն տեսակ հիվանդների, երեմն վարակիչ հիվանդություններով վարակվածների և բուժելու փոխարեն վարակ տարածում:

Ճանապարհներն այն ժամանակ շատ վատ էին, ուստի և հեռավոր վայրերից շատ թիչ մարդիկ էին գալիս: Խճուղի, այն ժամանակ, շկար. հիվանդներին բերում էին ձիերով, չորիներով կամ գրաստներով, բերում էին մեծ դժվարությամբ, որովհետեւ ճանապարհում տեղեր կային, որ ձիու համար անգամ դժվար էր անցնել Զերմուկ եկողները մեծ մասամբ լինում էին Վայոց Զորի և Սիսականի գյուղացիներից և բոշվոր թարաբյամաններից: Զերմուկի մոտ ոչ մի

բնակելի շենք գոյություն չուներ. մեկ ու կես կիլոմետր հեռավորության վրա գըտնավորմ էր միայն աղբբեզանական իստիւտ գյուղաց:

ներից բխող սառնորակ աղբյուրներից: Գետը, ինչպես և նրա վտակները, մինչև Կնդեվազ գյուղը, հարուստ են կարմրախայտ ձկներով: Զերմուկի ձորում, գետի դեմ-դի-




Զերմուկի կիրճը

Զերմուկի ձորը, պետք է ասել, բնության աննման հրաշալիքներից մեկն է: Զորից շաշմանով անցնում է փրփրած Արփաչայ-

մաց, խոյանում է մոտ 70—80 մետր բարձրությամբ մի ապառաժ, որի երեսին բուզն են հյուած հազարավոր ծիծնոնակներ, գետը, որի ջրերը հավաքվում են մոտիկ լեռ-

բով մի առանձին գեղեցկություն են տալիս: Բայց առաջին կերպ մի քաղաքացի կես բարձրության վրա, մի քանի տեղ, հարմար խորշերում, իրենց փետակն են դրել մեղրը կտրելու: Հավաքվում էին թակն առ դրել մեղրուները, որոնց պատրաս-

թնակիչ Քալբլահի Ղուրբանը, ճարպիկ մի անձ, հոկտեմբեր ամսում, սովորություն էր դարձրել և գալիս էր Զերմուկ այս քարածայուի մեղրը կտրելու: Հավաքվում էին



Զերմուկի ջրավազանների շենքը

տած մեղրը հաճախ այնքան շատ է լինում, որ խորշերից ցած է հոսում, ստեղծելով սևացած մի շերտ, որը նկատելի է ներքմից: Անցյալում, հիշում եմ, Զերմուկ գյուղի

հարևան գյուղացիները և առանձին հանդիսավորության մեջ կախում նրան երկաթե շղթայով: Զերմուկին առանձին գեղեցկություն է

տալիս նաև նրա մոտիկ ջրվեժը, որի շրերը հավաքվում են Զերմուկ գյուղի մոտիկ աղբյուրներից և հսկայական բարձրությունից, սպիտակ փրփուր դարձած, ներքեւ գահավիժում:

Գեղեցիկ է նաև Զերմուկի մոտիկ բնությունը: Լեռներն ամենուրեք ծածկված են ալպյան բուսականությամբ և անտառներով (դիմավորապես կաղնի ծառերով): Տեղերկան, ուր այնքան շատ անուշահոտ ծաղիկներ կան, որ մաս այնքան շատ անուշահոտ ծաղիկներ կան, որ տեղում կանգնած կարելի է հերիներանգ ծաղիկների մի փունչ կազմել:

Արտասովոր է նաև Զերմուկի արեգակը. նա այնքան հարուստ է ուշտրա-մանշաշակրդույն ճառագայթներով, որ բավական է մի քանի օր մաս այնտեղ և մարդ սեանում է հնդիկի սկսությամբ:

Հանքային աճա այս անգնահատելի հարստությունը, բնության այս սքանչելիքը, անցյալում թողվել էր անուշադրության: Հաճախ նա հիվանդին օգտակար լինելու փոխարեն վնասում էր: Միայն սովորական շրջանում Զերմուկն ստացավ իր սանատորիկ բուժիչ նշանակությունը: Սովետական գիտականները բազմակողմանիորեն ուսումնասիրեցին Զերմուկի բուժիչ հատկությունը և նորմալ պայմաններ ստեղծեցին Զերմուկում բուժվել կամ հանգստանալ ցանկացողների համար:

Ուսումնասիրություններից պարզվեց, որ Զերմուկը փիզիկո-քիմիական իր հատկություններով նման է համաշխարհային հըուշակ վայելող Զեխոսովակյան Կարլովի Վարիկի (Կալւսրադի) հանքային շրերին: Զերմուկի հանքային շրերը բուժում են մի շարք հիվանդություններ՝ լիրոդի, լեղապարկի, ստամոքսա-աղիքային տրակտի, ներվային, կանացի, հողացավի և այլ հիվանդություններ: Հիվանդությունները բուժվում են տարրեր մեթոդներով—հանճնարվում են լոգամներ, բուժիչ ցեխ, հանքային շրի խմում և այլն: Զերմուկն այժմ, իրավացի, համարվում է ոչ թե տեղական, այլ համամիութենական, համաշխարհային նշանակություն ունեցող բուժավայր:

Այս տարի ամռանը, իրբեւ Սոցապ մինիստրության խնամքին հանձնված տարիքը առած ու վատառողջ հիվանդ, ես նորից եղա Զերմուկում: Անճանաշլելի էր դարձել նախկին, 52 տարի առաջ իմ տեսած Զերմուկը Արփաշայի ձախ ափին բարձրանում էին Հայկական ՍՍՌ զանազան մինիստրությունների հոյակապ սանատորիաները:

Այսօր Զերմուկը կազմակերպված ձևով ընդունում է մոտավորապես տարեկան 1.800 հիվանդ մեր սեսպուլիկայից, ինչ-

պես և եղբայրական ուսապուլիկաներից: Ես հանդիպեցի անգամ Հետավոր Արևելքից, Ռիգայից եկած հիվանդների:

Զերմուկի ձորում, նախկին փոսերի մոտ, գտնվում է այժմ ջրավազանների նորակառուց գեղեցիկ շենքը, որն իր ջուղու ստանում է տարիներ առաջ երկրաբան Դիմուլինի բաց արած Զերմուկի հսկա շատրվանից: Այս ջուղն այնքան տաք է, որ այն առանձին խողովակներով տարվում է գետի սառ ջրի մեջ՝ լողանալով համար նորմալ տարություն տալով նրան:

Ջրավազանների այս շենքն այլևս բավարար չի համարվում. սանատորիայից գետի արևմտաք կառուցվում է երկու մեծ շենք, առաջինը սարի լանջից բխող հանքային տաք ջրի վրա, որի մեջ պիտի բերվեն Զերմուկի շրջապատռավ գոնված բոլոր տեսակի հանքային ջրերը, իսկ երկրորդը՝ նրա դիմաց, հովտի մեջտեղում, ջրավազանների համար:


Մարի լանջից բխող հանքային տաք ջուրը թափվում է փոքրիկ գետակի մեջ: Նրանից կես կիրամետը ցած, այդ նույն գետակի ափին, բխում է հանքային տաք ջուր ևս, որի շորջը պատեր են քաշված: Իսկ դրանից դեպի արևմտաք գտնվում է ջրի գործարանը, որն արտադրում է տարեկան երեք միլիոն շիշ «Զերմուկ» հանքային ջուր: Այդ քանակը, պետք է ասել, աննշան է Զերմուկի ջրի նկատմամբ Սովետական Միության մեջ եղած հսկա պահանջի համեմատությամբ և ծրագրվում է առաջիկայում խոշոր շափով ընդարձակել նրա արտադրությունը:

Զերմուկից թիշ ցածր, Արփաշայի վրա, շինված է հիգրոկայան, որի սահանքի յարձրությունը 72 մետր է: Նա օր ու գիշեր լուս է տալիս Զերմուկի բոլոր շենքերն և նորակառուցներին, ինչպես և մերձակա գյուղերին (Կեշուտ, Գնդեվազ և այլն): Զերմուկում այժմ մեծ թափով շինարարություն է կատարվում. ուսապուլիկական և միութենական բազմաթիվ կազմակերպություններ կառուցում են իրենց սանատորիաները:

Որպեսզի հնարավոր լինի Զերմուկի հանքային ջուրը դյուրին օգտագործել, անհրաժեշտ է եղել կանոնավորել հաղորդակցությունը: Տարիներ առաջ սկսվել է մեծ աշխատանք Զերմուկի խճուղու վրա: Նա սկսում է Արենի գյուղից և գետն ի վեր բարձրանում մինչև Զերմուկ: Բայց ի՞նչ հսկայական աշխատանք է կատարված այդ ճանապարհի վրա, որքան քարաժայուր և այլ խոշոր դուներ են խոնարհվել մարդկային ուժի առաջ: Ուղղակի հրաշք է կատար-

ված Գնդեվազի նեղ ձորում, ուր ոլորապտույտ, կարկաչում Արփաշալի կողքի ժայռը խոնարհվել էն մարդու հուժկու հարվածների տակ և ճանապարհ բաց արել: Անդնդախոր այդ ձորի միջով այսօր ավտոմեքենաները իրենց սուզոցը խառնելով Ար-

եմ Համարում Զերմուկի անցյալն ու ներկան համեմատել իրար, որովհետև անցյալում այստեղ ոշինչ չի եղել: Բայց Զերմուկի օրինակով ցանկանում եմ Համեմատել երկու աշխարհները՝ ամերիկյան գաղութարների գլխավորած կովի աշխարհը և



Զերմուկի ջրվեժը

կաշալի կարկաչին, գետին զուգընթաց, ոլորապտույտ բարձրանում են դեպի Զերմուկ, ասֆալտապատ խճուղու վրայից:

Ես, 84-ամյա ծերոնիս, Զերմուկում մնացի մոտ մի ամիս: Այնտեղ ես տեսա մարդկային այն հրաշքներն ու հրաշալիքները, որ կատարված են և կամ կատարվելու են անհարմար

սովետական խաղաղության աշխարհը: Զերմուկն իր կառուցումներով, իր նպատակով, աշխատավոր մասսայի նկատմամբ հարազատ կառավարության ցուցաբերած հոգատարությամբ սովետական խաղաղ աշխատանքը ցուցանշող ցայտուն ապացույն է: